

մարտէն ետքը (1578) Աթարեկութեան ամբողջ հողերուն, զորոնք պահեցին 1590 ի դաշամբ մինչեւ 1828: Անմիջապէս կը սկսէր հալածանքը. եւ նախ մանր իշխաններէն մաս մը՝ անձնական շահերու համար՝ կը մահմետականանար, եւ աթարեկ Բեգա Գիւր իշխանութիւնը փրկելու համար, մահմետական կ'ըլլար ինքնին՝ առնելով Սաֆար փաշայ անունը (1625 եւն): Յաջորդը Ուսուֆ Փաշայ (1635է սկսեալ) մոլիոանդ մահմետական մ'եղած էր. եւ այնպէս սաստկացուց կրօնի հալածանքն, որ քիչ մ'ետքը բուն վրական (մեսիս եւն) տարրը լիովին մահմետական եղած էր եւ վրական եկեղեցին — որ հոն անկախ էր Տփղիսի եկեղեցիէն, — այլ եւս գոյութիւն չունէր: Հազիւ սակաւաթիւ վրացի գիւղացիք մնացած էին քրիստոնեայ «առանց հովուաց», հոս ու հոն (հմմտ. Brosset, Histoire etc. II, 1, էջ 199—238): Այս պարագային դիւրաւ կ'ըմբռնուի թէ Տայոց մէջ ալ գտնուող վրածէս Հայերը (որոնք միշտ հայ մնացած էին ազգաւ ու լիզուաւ) առանց եկեղեցական նուիրապետութեան եւ անհովիւ մնացած՝ դիւրաւ զանգուածօրէն մահմետականացան 1643 ի